

ՀԱԳՄՉ 09.11

Երկրորդ հրատարակություն
1 սեպտեմբերի 2007թ.
Ներառում է փոփոխություններ

Մարտական գործողությունների տարածքի մաքրում

Տնօրեն,
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ),
2 United Nations Plaza, DC2-0650
New York, NY 10017
USA

Էլ. Փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498
Կայքէջ՝ www.mineactionstandards.org

Նախազգուշացում

Մույն փաստաթուղթն ուժի մեջ է մտել կազմի վրա նշված ամսաթվից: Քանի որ Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչները (ՀԱԳՄՉ) պարբերաբար վերանայվում և թարմացվում են, դրանից օգտվողները պետք է այցելեն ՀԱԳՄՉ ծրագրի կայքէջը վերջինիս կարգավիճակը ստուգելու նպատակով (<http://www.mineactionstandards.org/> կամ ՄԱԿԱԾ կայքէջ հետևյալ հասցեով՝ <http://www.mineaction.org>):

Հեղինակային իրավունք

ՄԱԿ-ի սույն փաստաթուղթը Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչ է (ՀԱԳՄՉ) և սեփականության իրավունքով պաշտպանված է ՄԱԿ-ի կողմից: Ոչ սույն փաստաթուղթը, ոչ էլ դրա որևէ հատված չի կարելի վերարտադրել, պահել կամ որևէ այլ միջոցով, կամ ձևով փոխանցել որևէ այլ նպատակի համար՝ առանց ՄԱԿ-ի անունից գործող ՄԱԿԱԾ-ի կողմից նախապես գրավոր համաձայնություն ձեռք բերելու:

Մույն փաստաթուղթը ենթակա չէ վաճառքի:

Տնօրեն
ՄԱԿ-ի Ականազերծման ծառայություն (ՄԱԿԱԾ)
2 United Nations Plaza, DC2-0650
Նյու Յորք, NY 10017
ԱՄՆ

Էլ-փոստ՝ mineaction@un.org
Հեռախոս՝ (1 212) 963 1875
Ֆաքս՝ (1 212) 963 2498

Բովանդակություն

Բովանդակություն	iii
Նախաբան	iv
Ներածություն	v
Մարտական գործողությունների տարածքի մաքրում	1
1. Ծավալ	1
2. Փաստաթղթեր	1
3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	1
4. Ընդհանուր ՄԳՏՄ	2
5. ՄԳՏՄ պահանջներ	3
5.1 Վնասագերծման ենթակա տարածք	3
5.2. Վնասագերծման որակ	3
5.3. Մաքրման խորություն	4
5.4. Զինամթերքի հայտնաբերման սարքավորումներ	5
6. Անվտանգություն	6
7. Հաշվետվություններ և գրանցումներ	7
8. Պատասխանատվություններ և պարտավորություններ	8
8.1 Հակամարտության կողմերի պարտավորություններ	8
8.2 Միացյալ ազգերի կազմակերպության պարտավորություններ	8
8.3 ԱԳԱՄ-ի պարտավորություններ	9
8.4 Վնասագերծող կազմակերպության պարտավորություններ	9
8.5 Վերահսկող մարմնի պարտավորություններ	10
8.6 Ստուգող մարմնի պարտավորություններ	10
Հավելված Ա (Նորմատիվ) Հղումներ	11
Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հապավումներ	12
Փոփոխությունների գրանցում	16

Նախաբան

Մարդասիրական հակաականային ծրագրերի միջազգային չափորոշիչները առաջին անգամ առաջարկվել են 1996թ. հուլիսին Դանիայում տեղի ունեցած միջազգային տեխնիկական գիտաժողովի աշխատանքային խմբերի կողմից: Չափորոշիչներ են սահմանվել ականազերծման բոլոր ասպեկտների համար, չափանիշեր են առաջարկվել և համաշխարհային նոր սահմանում է տրվել «ականազերծում» գաղափարին: 1996թ վերջում Դանիայում առաջարկված սկզբունքները զարգացվել են ՄԱԿ-ի կողմից անցկացվող ժողովի աշխատանքային խմբի կողմից և մշակվել են Մարդասիրական ականազերծման գործողությունների միջազգային չափանիշերը: Առաջին հրատարակությունը տպագրվել է ՄԱԿ-ի ականազերծման ծառայության (ՄԱԿԱԾ) կողմից 1997թ. մարտին:

Այս նախնական չափորոշիչների ծավալները այդ ժամանակից ի վեր ընդլայնվել են՝ ներառելու հակաականային գործողությունների այլ բաղադրիչներ և արտացոլելու գործողությունների, գործընթացների, գործելաճների և նորմերի հետ կապված փոփոխությունները: Չափորոշիչները վերամշակվեցին և վերանվանվեցին որպես Հակաականային գործողությունների միջազգային չափորոշիչներ (ՀԱԳՄՉ), որի առաջին հրատարակությունը լույս տեսավ 2001թ. հոկտեմբերին:

ՄԱԿ-ն ընդհանուր պարտավորություններ ունի ականային ծրագրերի արդյունավետ կառավարումը խրախուսելու և կյանքի կոչելու համար, որը ներառում է չափորոշիչների մշակումն ու պահպանումը: Այդ պատճառով ՄԱԿԱԾ-ը ՄԱԿ-ում տեղակայված այն գրասենյակն է, որը պատասխանատու է ՀԱԳՄՉ-ի մշակման և պահպանման համար: ՀԱԳՄՉ ստեղծվում է Ժնևի Մարդասիրական ականազերծման միջազգային կենտրոնի աջակցությամբ:

ՀԱԳՄՉ-ն պատրաստելու, վերանայելու և վերափոխելու աշխատանքը իրականացվում է տեխնիկական հանձնաժողովների կողմից միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների օժանդակությամբ: Յուրաքանչյուր չափորոշիչի ամենավերջին տարբերակը, տեխնիկական հանձնաժողովների կատարած աշխատանքի հետ միասին կարելի է գտնել <http://www.mineactionstandards.org> կայքում: Առանձին ՀԱԳՄՉ-ները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ՝ արտացոլելու հակաականային գործողության զարգացող նորմերն ու պրակտիկան և միջազգային կանոնակարգերի և պահանջների շարքում ներառելու կատարվող փոփոխությունները:

Ներածություն

Ընդունված է, որ անկախ ռազմամթերքի գնման և արտադրության որակի վերահսկողությունից, միևնույն է ռազմադաշտում որոշ զինամթերքներ նախատեսվածի պես չեն աշխատում: Պատմականորեն, պայթուցիկ նյութերի վնասազերծման գործառնական պլանավորման ժամանակ եղել է 10%-ի շեղում նպատակին չճանաչված զինամթերքի և նախատեսվածի միջև: Սակայն նպատակին չճանաչված զինամթերքի վերջին գնահատումները ցույց են տվել, որ կարելի է ակնկալել 30-50%-ի ցուցանիշ:¹ Հետևաբար, այնպիսի իրավիճակներում, երբ ռազմամթերքի կիրառման ցուցանիշները բարձր են, մարտադաշտի նախկին տարածքներում պատերազմի պայթուցիկ մնացորդներից առաջացած վնասը կարող է զգալի լինել: Բացի այդ, հակամարտություններից հետո գրեթե բոլոր միջավայրերում զինամթերքի պահեստավորման վայրերում եղել են ոչ ցանկալի պայթյունների դեպքեր, որի պատճառը զինամթերքի անհամապատասխան և (կամ) ոչ պատշաճ պահպանումն է: Արդյունքում՝ պատերազմի պայթուցիկ մնացորդները տարածվել և ցիր ու ցան են արվել պահեստավորման վայրը շրջապատող մեծ տարածքում:

Նպատակին չճանաչված զինամթերքի վնասը կամ ռիսկը տարբերվում է՝ կախված զինամթերքի տեսակից և դրանց արձակման, կրակելու կամ զինման համակարգերի հետ կապված մի շարք փոփոխական գործոններից: Հետևաբար, եթե զինամթերքի չպայթած տարրերի պայմանը չի կարող հաստատվել, ապա պետք է յուրաքանչյուր տարրի վերաբերվել վտանգավոր լինելու սկզբունքով և տեղում վերացնել դրանք: Տեխնիկական տեղեկությունների առկայությունը կարող է զգալիորեն օգնել ռիսկերի և զինամթերքի վնասների գնահատման, ինչպես նաև տարրի անվտանգ լինելու կամ տեղից չջարժելու հարցում:

Աֆղանստանում, Կոսովոյում, Լաոսում և Լիբանանում իրականացված գործառնություններից դասեր են քաղվել, որոնց օգնությամբ ուղեկցվում է մարտատարածքի մաքրման կազմակերպումը: Թեպետ ընդունված է, որ պատերազմի պայթուցիկ մնացորդների գործառնական վնասազերծման աշխատանքների կարիքն առավել անհրաժեշտ է մարտական գործողությունների դադարին հետևող կարճաժամկետ շրջանում, սակայն կարող է անհրաժեշտ լինել հաստատել և երկար տարիներ պահպանել վնասազերծման և արձագանքման երկարաժամկետ հնարավորությունը:

Ինչպես ողջ զինամթերքի վնասազերծման դեպքում, պատերազմական տարածքի վնասազերծմամբ ազատված տարածքի շահառուները պետք է վստահ լինեն, որ վնասազերծված տարածքն օգտագործման համար ապահով է: Սա պահանջում է կառավարման համակարգեր և վնասազերծման ընթացակարգեր, որոնք տեղին են, արդյունավետ, գործուն և ապահով: Մարտական գործողությունների տարածքի վնասազերծման պլանավորման ժամանակ պետք է նկատի ունենալ ազգային և տարածքի գերակայությունները: Բացի այդ, վնասազերծման գործողությունների ընթացքում, տեղի համայնքին պետք է նաև կանոնավոր կերպով տրամադրվեն ամփոփ տեղեկություններ և բացատրություններ, քանի որ սա վստահություն ստեղծելու շատ արդյունավետ միջոց է: Համայնքի հետ կապ պահպանելու գործառույթը պետք է լինի գործառնություններին զուգակցված սովորական աշխատանք:

¹ ԱԳԱՄ-ի հաղորդած տվյալների համաձայն ձախողման դեպքերը Լաոսում հասնում են մինչև 30%, Լիբանանում՝ ըստ MACC SL հաղորդումների 2006 թ. եղել է 50%-ի կարգի կամ ավելի բարձր:

Այս չափանիշը հիմնված է երկփուլ մոտեցման վրա: Առաջին փուլը՝ որակի ապահովումը (ՈԱ), ներառում է վնասազերծման գործընթացից առաջ և դրա ընթացքում պայթուցիկ նյութերը վնասազերծող կազմակերպության հավատարմագրում և մոնիտորինգ: Երկրորդ փուլը՝ որակի վերահսկումը (ՈՎ) կապված է, վնասազերծված տարածքի ապահովության ստուգման հետ՝ նախքան այն պաշտոնապես կհանձնվի շահառուի օգտագործմանը: ՈԱ կիրառումը (մաքրման գործընթացից առաջ և նրա ընթացքում), վնասազերծումից հետո իրականացվող ՈՎ հետ միասին, մեծապես կնպաստի հողի՝ իր նպատակային օգտագործման համար ապահով լինելու մեջ վստահության ընդունելի մակարդակն ապահովելու գործընթացին: Վնասազերծման որակը պետք է ընդունելի լինի ինչպես Ականազերծման գործողությունների ազգային մարմնի/մարմինների (ԱԳԱՄ), այնպես էլ շահառու տեղական համայնքի համար, ինչպես նաև պետք է լինի չափելի և գնահատելի:

Մարտական գործողությունների տարածքի մաքրում

1. Ծավալ

Սույն չափորոշիչն ուղղորդում է որակի համակարգը (օր.՝ կազմակերպումը, ընթացակարգերը և պատասխանատվությունները), որն անհրաժեշտ է, որպեսզի որոշվի թե նախկին մարտական գործողությունների տարածքները մաքրված են մինչ ընդունելի ստանդարտները, թե ոչ:

2. Փաստաթղթեր

Հավելված Ա-ում բերված է նորմատիվ փաստաթղթերի ցանկ: Նորմատիվ փաստաթղթերը կարևոր փաստաթղթեր են, որոնց հղում է կատարվել այս չափորոշիչում և, որոնք կազմում են սույն չափորոշիչի դրույթների մասը:

3. Տերմիններ, սահմանումներ և հապավումներ

Հավելված Բ-ում բերված է սույն չափորոշիչում կիրառված տերմինների, սահմանումների և հապավումների ցանկը: ՀԱԳՄՉ-ում կիրառված բոլոր տերմինների, սահմանումների և հապավումների ամբողջական ցանկը բերված է ՀԱԳՄՉ 04.10-ում:

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքում «պետք է», «հարկավոր է» և «կարող է» բառերն օգտագործված են համապատասխանության նախատեսված մակարդակը ցույց տալու նպատակով: Այդ կիրառումը համապատասխանում է ISO չափորոշիչների և ուղենիշների լեզվի հետ:

ա) «պետք է» կիրառվում է ցույց տալու այն պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները, որոնք պետք է ընդունվեն՝ չափորոշիչն ամբողջությամբ բավարարելու համար.

բ) «հարկավոր է» օգտագործվում է նախընտրելի պահանջները, մեթոդները կամ առանձնահատկությունները ցույց տալու համար.

գ) «կարող է» օգտագործվում է գործողության հնարավոր մեթոդը կամ ընթացքը ցույց տալու համար:

«Ականազերծման գործողությունների ազգային մարմին» (ԱԳԱՄ) տերմինը վերաբերում է ականներ ունեցող բոլոր այն երկրների պետական վարչություններին, կազմակերպություններին կամ հաստատություններին, որոնք պարտավոր են կարգավորել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները: Դեպքերի մեծ մասում Ականազերծման գործողությունների ազգային կենտրոնը (ԱԳԱԿ) կամ դրան համարժեք հաստատությունը հանդես է գալիս որպես ԱԳԱՄ կամ գործում է նրա անունից: Որոշ իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ կամ այլ ճանաչված միջազգային մարմնի համար կարող է անհրաժեշտ և պատշաճ լինել ստանձնել ԱԳԱՄ-ի պարտականությունների մի մասը կամ բոլորը և իրականացնել որոշ կամ բոլոր գործառույթները:

«Մարտի դաշտ» տերմինը վերաբերում է այն տարածքին, որտեղ հայտնաբերվել են ՉՊԶ և ԼՊԶ: Այն կարող է ներառել նախկին մարտական գործողությունների տարածքները, պաշտպանական դիրքերը և տեղամասերը, որտեղ թողնվել, արձակվել կամ զգվել են օդային ուղիներով բերված կամ հրետանու զինամթերքները:

«Մարտական գործողությունների տարածքի մաքրում» (ՄԳՏՄ) տերմինը վերաբերում է վտանգավոր տարածքների համակարգային և վերահսկվող մաքրմանը, որտեղ գտնվող վտանգների վերաբերյալ հայտնի է, որ վերջիններս **չեն** ներառում ականներ:

«Վերահսկվող մարմին» տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը, որն ԱԳԱՄ կամ ԱԳԱԿ անունից վերահսկում է վնասագերծման կազմակերպության և նրա ստորաբաժանումների աշխատանքը:

“Ստուգող մարմին” տերմինը վերաբերում է ցանկացած կազմակերպությանը, որն ԱԳԱՄ անունից իրականացնում է մաքրմանը հաջորդող ՈՎ՝ կիրառելով պատահական փորձարկումների ընթացակարգերը կամ ստուգումների այլ համապատասխան և համաձայնեցված մեթոդներ:

Նախկին մարտի դաշտերը պետք է համարվեն ‘վնասագերծված’ երբ վնասագերծող կազմակերպությունը երաշխավորի բոլոր կամ նշված ՊՊՄ/ՊԶ հեռացումը և (կամ) վերացումը՝ կախված առաջադրանքի ցուցումներից, նշված տարածքից և անհրաժեշտ խորությունից:

4. Ընդհանուր ՄԳՏՄ

ՄԳՏՄ գործողությունները ներառում են ՊՊՄ՝ ներառյալ ՉՊԶ և լքված պայթուցիկ զինամթերքի (ԼՊԶ) բացահայտումը և հեռացումը որոշակի սահմանված տարածքներից, որոնք կարող են ներառել մարտի դաշտերը, պաշտպանիչ դիրքերը և այն տեղամասերը, որտեղ արձակվել կամ գցվել են օդային ուղիներով բերված կամ հրետանու զինամթերքները:

Ելնելով մարդասիրական գերակայություններից և հողատարածքի օգտագործման նպատակներից՝ ՄԳՏՄ կարող է ներառել մակերեսային և ենթամակերեսային մաքրում: ՄԳՏՄ նկատմամբ պահանջ կարող է լինել ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական վայրերում:

ՄԳՏՄ գործողությունները սովորաբար չեն ներառում ԼՊԶ խոշոր կուտակումների հեռացումը, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք հնարավոր պայթյունի արդյունքում տարածվել են խոշոր տարածքով մեկ, ինչպես նաև ՄԳՏՄ գործողությունները չեն ներառում պահեստավորման ազգային հաստատություններում գտնվող զինամթերքների պահուստների հեռացումը:

ՄԳՏՄ չպետք է իրականացվի այն տարածքներում, որտեղ հնարավոր է հողային ականների առկայությունը: Եվ հակառակը, հողային ականների վնասագերծման ընթացակարգերը չպետք է օգտագործվեն այն վայրերում, որտեղ կարող են առավել պատշաճ և արդյունավետ լինել ՄԳՏՄ գործողությունները:

Նշում՝ Որոշ իրավիճակներում կարող է ընդունելի լինել, որպեսզի ՄԳՏՄ տեխնիկան կիրառվի այնպիսի վայրերում, որոնց մասին հայտնի է, որ այդտեղ կարող են առկա լինել միայն տրանսպորտային միջոցների դեմ ականներ, և չկան հակահետևակային ականներ: Այնուամենայնիվ, սույն որոշումը պետք է ընդունվի՝ ելնելով կոնկրետ տարածքի ընդհանուր վտանգի վերլուծությունից:

ՄԳՏՄ գործողությունների շրջանակներում ներառված Պայթուցիկ զինամթերքի (ՊԶ) կարող են ընդգրկել՝

ա) նախկին զինվորական դիրքերում գտնվող զինամթերքներ և զինամթերքների ժամանակավոր պահեստավորման վայրեր, կամ ուղղակիորեն գցված կամ լքված զինամթերքներ, որոնք չեն նախապատրաստվել օգտագործման համար և ներառված չեն ազգային պահուստներում:

բ) զինամթերքները, որոնք լիցքավորվել, համակցվել, հրահանները քաշվել կամ նախապատրաստվել են օգտագործման համար, սակայն օրինակի համար չեն կրակել, ինչպես նաև հարձակողական կամ նախկին պաշտպանողական դիրքերում գտնվող զինամթերքները, որոնք գրավված են եղել:

գ) զինամթերքները, որոնք կրակվել, գցվել, բաց են թողնվել, սակայն լիարժեք կերպով չեն գործել: Մա ներառում է այն ՉՊԶ վտանգավոր բաղադրիչները, որոնք գործել են միայն մասնակիորեն:

դ) ծուղակ ականները և չգործած կամ լքված իմպրովիզացված պայթուցիկ նյութերը (ԻՊՆ), որոնք թողնվել են մարտական գործողությունների ավարտից հետո:²

5. ՄԳՏՄ պահանջներ

5.1 Վնասագերծման ենթակա տարածք

Վնասագերծման ենթակա տարածքի մեծությունը պետք է սահմանվի առաջադրանքը ներկայացնող մարմնի կողմից՝ տեխնիկական հետազոտության իրականացման միջոցով, որն օգտագործում է վստահելի աղբյուրներից ստացված տեղեկությունները և տեխնիկական հետազոտության կամ վնասագերծման առաջադեմ գործողությունների ընթացքում ստացված ապացույցները: Տեխնիկական հետազոտության համար տես ՀԱԳՄՉ 08.20:

ՄԳՏՄ մաքրման գերակայությունները կարող են սահմանել վնասագերծման ենթակա տարածքը՝ օժանդակելով զարգացման կամ առևտրային ծրագրերի իրականացմանը, օրինակ՝ ճանապարհաշինությանը և այլն: Տարբեր տարածքների համար կարող են սահմանվել մաքրման տարբեր խորություններ՝ կախված վտանգի գնահատումից և հողատարածքի հետագա օգտագործումից: Այս սահմաններից դուրս ընկած տարածքը դեռևս կարող է վտանգավոր լինել: Այնուամենայնիվ, մարդասիրական ՄԳՏՄ առաջադրանքների համար վնասագերծման ենթակա տարածքի մեծությունը չի կարող միշտ ի սկզբանե վերջնականապես սահմանվել, սակայն կարող է որոշվել մաքրման ընթացքից ելնելով: Մաքրման գերակայությունները որպես այդպիսիք պետք է սահմանվեն առանձին համայնքի վրա ունեցած ազդեցությունն ազգային ենթակառուցվածքի գերակայությունների հետ համեմատելու միջոցով:

5.2 Վնասագերծման որակ

ՄԳՏՄ նկատմամբ որակի պահանջները կախված են իրականացվող ՄԳՏՄ դասակարգից: ՄԳՏՄ երկու դասակարգերն են մակերեսային և ենթամակերեսային վնասագերծումը: Ռիսկի գնահատումը, մարդասիրական մտահոգությունների և մաքրման ռեսուրսների դասակարգումը պետք է իրականացվեն մակերեսային և ենթամակերեսային վնասագերծման աշխատանքների միաժամանակյա կամ հետևողական անցկացման վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

² ԻՊՆ հետ աշխատանքի պատասխանատվությունը սովորաբար դրված է ռազմական կամ ոստիկանության մարմինների վրա, որոնք ունեն համապատասխան սարքավորումներ: Մարդասիրական/քաղաքացիական վնասագերծման կազմակերպությունները պետք է զգուշանան չգործած կամ լքված ԻՊՆ վնասագերծումից՝ հակամարտության ժամանակ կողմնապահության ցուցաբերման մեղադրանքից և մարդասիրական կարգավիճակի հետագա կորստից զերծ մնալու համար:

ա) Մակերեսային մաքրումը սովորաբար հիմնված է տեսողական գնումների վրա, չնայած կարող են լինել օրինակներ, երբ մետաղորսիչ սարքը կարող է օգտագործվել բուսականությամբ ծածկված տարածքներում, հողաբլուրների վրա կամ այլ կասկածելի տարածքներում փնտրմանն աջակցելու նպատակով: Փնտրման աշխատանքների, զինամթերքների տեսակների և գտնված իրերի վայրերի գրանցումը չափազանց կարևոր է և կարող է աջակցել ցանկացած ենթամակերեսային հետազոտության փնտրումների մանրամասները պարզելու գործում: Տարածքի համար յուրահատուկ պահանջներով այլ բան սահմանված լինելուց բացի բոլոր այլ դեպքերում ՊՊՄ/ՊԶ, ներառյալ փոքր զենքերի արկերը (ՓՁԱ) և նրանց վտանգավոր մասերը պետք է հեռացվեն: Զրահապատ ռազմական մեքենաների վնասազերծման համար տես TNMA 09.30.01, Աղքատացված ուրանի վնասազերծման համար տես TNMA 09.30.02 և զինամթերքների կուտակումների վնասազերծման համար տես TNMA 09.30.06 2007:

բ) Ենթամակերեսային մաքրման համար կարող է օգտագործել հայտնաբերման կամ հողահանման տեխնիկա: Նշված բոլոր ՊՊՄ և վտանգավոր բաղադրիչները հեռացվում են առաջադրանքը ներկայացնող մարմնի պահանջներին համաձայն: ՉՊԶ և ԼՊԶ հեռացումը պետք է իրականացվի ՀԱԳՄՉ 09.30. Պայթուցիկ զինամթերքի հեռացմանը համաձայն:

Սահմանված տարածքում և սահմանված խորության վրայից բոլոր կամ նշված ՉՊԶ հեռացումը և (կամ) վերացումը պետք է ապահովված լինի՝

- օգտագործելով ՄԳՏՄ հավատարմագրված կազմակերպություն(ներ) հավատարմագրված գործառնական հնարավորություններով, ինչպիսիք են ձեռքով ՄԳՏՄ մաքրումը, և ՊՀՀ որակավորման ու փորձառության պատշաճ մակարդակ ունեցող անձնակազմը (տես ՀԱԳՄՉ 09.30)՝ օգտագործելով կառավարման պատշաճ գործելառճեր և կիրառելով ապահով և արդյունավետ գործառնական ընթացակարգեր.
- վերահսկելով վնասազերծող կազմակերպությունը և նրա ստորաբաժանումները (տես ՀԱԳՄՉ 07.40).
- իրականացնելով մաքրված տարածքի մաքրմանը հաջորդող ստուգման գործընթացը (տես ՀԱԳՄՉ 09.20):

ՄԳՏՄ առաջադրանքում պետք է հստակեցված լինի մաքրման ենթակա տարածք, հայտնաբերման նպատակային չափերը, մաքրման խորությունը և վերահսկման ու ստուգման պահանջները: Վերջիններս պետք է ներկայացվեն ԱԳԱՄ-ի կամ պատվիրատուի կողմից:

5.3. Մաքրման խորություն

Եթե մարտի դաշտում պահանջվում է իրականացնել ենթամակերեսային վնասազերծում, վնասազերծման սահմանված խորությունը պետք է որոշվի առաջադրանքը ներկայացնող մարմնի կողմից և կարող է սահմանվել տեխնիկական հետազոտության իրականացման միջոցով կամ տարածքում առկա ՊՊՄ խորությունը ներկայացնող վստահելի այլ տեղեկությունների հիման վրա և հողատարածքի հետագա նպատակային օգտագործման գնահատման միջոցով: ՊՊՄ խորության վերաբերյալ վստահելի տեղեկությունների բացակայության դեպքում մաքրման անհրաժեշտ խորությունը պետք է սահմանվի առաջադրանքը ներկայացնող մարմնի կողմից:

Նշում՝ Օրինակ՝ Կոստովոյում ենթամակերեսային մաքրման ընդունված խորությունը կազմում է 50 սմ, իսկ Լիբանանում՝ 20 սմ, կախված զինամթերքի՝ հողի մեջ ներթափանցման սահմանված խորությունից: Լաոսում զինամթերքի խորությունները զգալիորեն տարբերվում են, և մաքրման ընդունված պրագմատիկ 25 սմ խորությունը հիմնված է հողի առավել տարածված օգտագործման (գյուղատնտեսություն) վրա:

Վնասագերծման խորությունների սահմանումը կախված կլինի հողի նպատակային օգտագործումից, վնասագերծման ենթակա տարածքում ՊՊՄ առկայության հավանականությունից և շրջակա միջավայրի այլ գործոններից: Օրինակ՝

- ՊՊՄ-ները կարող են լինել հողի մակերեսին: Այս դեպքում հատկորոշումներում կարող է պահանջվել հեռացնել և (կամ) վերացնել միայն մակերեսային ՊՊՄ-ները:
- Քաղաքային տարածքներում իրականացվող մաքրումների դեպքում որպես մաքրման գործընթաց կարող է անհրաժեշտ լինել հեռացնել մի քանի մետր որմնաքար:
- Այն դեպքերում, երբ օգտագործվել են խոշոր ռումբեր և հրթիռներ կամ մեծ տրամաչափի արկեր, մաքրման խորությունը կարող է հասնել մի քանի մետրի:
- Անապատային կամ ավազաբեր վայրերի ավազաբերությունների դեպքում կարող է պահանջվել 1.0 կամ 2.0 մ խորությամբ մաքրում՝ հայտնաբերելու և վերացնելու համար այնպիսի ՊՊՄ-ներ, որոնք ի սկզբանե տեղադրվել էին հողի մակերեսին կամ նրան մոտ:

Մաքրման անհրաժեշտ խորությունը պետք է հարմարեցվի մաքրման աշխատանքների առաջընթացին համապատասխան: Ցանկացած փոփոխություն պետք է համաձայնեցվի ԱԳԱՄ ու վնասագերծող կազմակերպության միջև և պետք է պաշտոնապես գրանցվի:

Վնասագերծման գործընթացը պետք է կրկնվի, եթե գոյություն է ունեցել հողի օգտագործման նպատակի զգալի փոփոխություն, որը պահանջում է մաքրման առավել մեծ խորություն: Պետք է սահմանվեն պոտենցիալ փոփոխությունների մանրամասն գրանցման և վերահսկման մեխանիզմներ:

Նշում՝ Կարող են լինել իրավիճակներ, երբ ակննդագերծող կազմակերպությունը ֆինանսավորվում է կոնկրետ տարածքում գործունեություն ծավալելու համար մաքրման իր սեփական առաջադրանքներն սահմանելու իրավունքով՝ ելնելով դոնոր կազմակերպության և (կամ) ԱԳԱՄ կողմից ներկայացված ընդհանուր գերակայություններից: Նման իրավիճակներում ակննդագերծող կազմակերպությունը պետք է մաքրումից առաջ մշակի վնասագերծման նախագիծը, որում նշված կլինի վնասագերծման ենթակա տարածքը և մաքրման նախատեսվող խորությունը:

Նշում՝ Հետազոտության ընթացքում «մարտի» անցկացման տարվա եղանակի որոշումը կարող է կարևոր լինել և ազդեցություն ունենալ զինամթերքի ներթափանցման խորության և աղտոտման վրա, օրինակ՝ թաց եղանակ փափուկ հողով, ձմռան ամիսներ սառած հողով կամ կախված աշխարհագրական տարածքից և կլիմայից: Կարող է լինել նաև հակառակ դեպք, երբ ամռան ամիսներին հողը լինում է չոր և պինդ:

5.4. Զինամթերքի հայտնաբերման սարքավորումներ

Ենթամակերեսային մաքրման համար կարող են տեղին լինել հայտնաբերման տարբեր սարքավորումներ՝ ներառյալ ականներ հայտնաբերող շների օգտագործումը: Հայտնաբերման պատշաճ միջոցները ներառում են՝

- մակերեսային փնտրման մետաղի հայտնաբերման սարքեր – նույն սարքերը, որոնք օգտագործվում են ականների վնասագերծման ժամանակ, չնայած սրանք կարող են չափազանց զգայուն լինել ՄԳՏՄ առաջադրանքներ իրականացնելու համար:
- մակերեսային փնտրման մետաղի հայտնաբերման սարքեր, որոնք նվազագույն մետաղական ականների փոխարեն մշակվել կամ նախատեսվել են որոշակի նպատակային ՊՊՄ հայտնաբերման նպատակով:

- լայն և խոշոր հանգույցներ հայտնաբերող սարքեր.
- խորը փնտրման սարքեր.
- մագնիսաչափեր.
- հայտնաբերման սարքեր, որոնք տեղափոխվում են ձեռքով կամ ամրացված են ավտոմեքենաների վրա:

Հայտնաբերման տեխնոլոգիաների մանրամասնությունների համար կարող եք հղում կատարել 2003թ-ին Եվրոպական Խորհրդի կողմից հրատարակված Մարդասիրական Ականազերծման համար Մետաղի հայտնաբերման սարքերի ձեռնարկին կամ 2006թ. մարտին ՄԱԺՄԿ կողմից հրատարակված Հայտնաբերման տեխնոլոգիաների և մարդասիրական ականազերծման համակարգերի վերաբերյալ ուղեցույցին:

6. Անվտանգություն

ՄԳՏՄ գործողությունների համար անվտանգության նվազագույն հեռավորությունները կախված են ակնկալվող վտանգից և իրականացվող գործողության տեսակից:

ա) Մակերեսային փնտրումների համար չպետք է կիրառվեն ապահովության նվազագույն հեռավորություններ այն պայմանով, որ իրերին ոչ մի կերպ չի կարելի դիպչել, այսինքն տեսողական կերպով բացահայտվում է դրանց գտնվելու վայրը և դրանք նշվում են շաղագրիչ ներկերի կամ մակերեսային մարկերների միջոցով: Այնուամենայնիվ, միշտ պետք է դիտարկվեն ծուղակ ականների առկայության հնարավորությունները:

բ) Մակերեսային վնասազերծման համար ՉՊԶ փնտրման դեպքում ՉՊԶ շարժման կամ խաթարման ռիսկի առկայության պայմաններում պետք է դիտարկվի անվտանգության հեռավորությունը և կիրառվի վտանգի նշված տարածքում մարդկանց նվազագույն քանակի սկզբունքը:

գ) Հողի ստանդարտ միջոցով ենթամակերեսային մաքրման համար պետք է գնահատվի և կիրառվի ակնկալվող զինամթերքներից անվտանգության անհրաժեշտ հեռավորությունը: Որպես օրինակ Աֆղանստանում անվտանգության ընդունելի հեռավորությունն ընդունված է 50 մ, իսկ Լատուում՝ 10մ՝ կախված առավել տարածված զինամթերքների տարածման արդյունավետ կանխատեսումներից, ռիսկի գնահատումից և պայթյունի հավանականությունից:

Նշում՝ Աշխատանքային տեղամասի նախապատրաստման աշխատանքների շրջանակներում կարող է թույլատրվել բուսականության զգույշ կտրումը և հեռացումը ու մակերեսային մաքրումից հետո տեղամասով տեղաշարժումը մաքրման 'ուղիների' կամ 'արկղերի' նշագծման և նախապատրաստման համար՝ հետագա ենթամակերեսային մաքրման նպատակով: Ենթամակերեսային ստուգումները պետք է իրականացվեն նախքան ձողերի կամ նշումների խորասուզումը հողի մեջ:

Նշում՝ ՄԳՏՄ փնտրման եղանակները պետք է մանրամասն նախագծվեն և համակարգվեն՝ տարածքի լիարժեք ներգրավումն ապահովելու նպատակով: 'Ուղիների' նշագծումը կարող է օգտագործվել այնպես, ինչպես սկանների մաքրման գործողությունները, սակայն ՄԳՏՄ արագությունը հաճախ շատ ավելի մեծ է, քան սկանների մաքրման արագությունը, որի դեպքում նշագծման անհրաժեշտությունը պետք է հիմնված լինի արտադրողականության վրա: Որոշ ծրագրեր ենթամակերեսային մաքրման ենթակա տարածքը բաժանում են օրինակ 25մ x 25մ կամ 50մ x 50մ քառակուսիների և յուրաքանչյուր քառակուսու համար նշանակվում է մեկ մաքրման մասնագետ/սկանագերծող կամ խոշոր հանգույցների թիվ: 'Քառակուսու' սահմանները պետք է նշվեն ձողերով և (կամ) ժայռակաշիվ/պարանով, այնուհետև ներքին գծերը կնշվեն և արագորեն կտեղաշարժվեն ամուր պարանների օգնությամբ՝ նպատակ հետապնդելով իրականացնել վերահսկողությունը և ապահովել ամբողջ տարածքի ներառումը, ինչպես նաև նվազագույնի հասցնելով նշագծման վրա ծախսված ժամանակը: ՄԳՏՄ նշագծումը պետք է իրականացվի ՀԱԳՄՉ 08.40. Վտանգների նշագծման համաձայն:

7. Հաշվետվություններ և գրանցումներ

Պատերազմի պայթուցիկ մնացորդների մասին արձանագրությունը (ՈՍԶ Արձանագրություն V) ներկայացնում է ՉՊԶ և ԼՊԶ վերաբերյալ տեղեկատվության գրանցման, պահպանման և բացթողման որոշակի պարտականություններ: Սույն Արձանագրության նպատակի հետ մեկտեղ, այլ ամենի հետ զուգահեռ, ՄԳՏՄ գործողությունների ընթացքում հայտնաբերված իրերի, դրանց՝ ում կողմից, որտեղ և ինչպիսի խորության վրայից հայտնաբերված լինելու հետ կապված համապարփակ գրանցումների պահպանումը կօժանդակի կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորմանը:

Բազմաթիվ երկրներում մակերեսային արագընթաց ՄԳՏՄ կնվազեցնի համայնքների ռիսկը և կապահովի հողատարածքի կիրառելիությունը: Երկարաժամկետ կտրվածքով կարող է անհրաժեշտ լինել լրացուցիչ ենթամակերեսային վնասագերծում: Գոյություն ունեն զգալի առավելություններ տարբեր վայրերում հայտնաբերման ենթակա զինամթերքների տեսակները մատնանշող գրանցումներ կատարելու մեջ: Օրինակ՝ մեծաքանակ զինամթերքների հարվածների տարածքների մակերեսային մաքրումը կարող է վերացնել շոշափելի վտանգը, սակայն այդ ընթացքում այն կարող է նաև հեռացնել զինամթերքների 'հետքերի' կամ վտանգավոր տարածքների նշանները՝ այդպիսով զինամթերքների տեսակների և գտնվելու վայրերի գրանցումը կօգնի պահպանել հարվածների շրջանների մասին տեղեկատվությունը հետագա ենթամակերեսային մաքրումների նպատակով: Ցանկացած առաջադրանք, անկախ նրանից, թե այն մակերեսային, թե ենթամակերեսային մաքրման առաջադրանք է, պետք է ճշտորեն փաստաթղթավորվի և գրանցվի ԱԳԱՄ-ում:

Զինամթերքների տեսակների գրանցումը կօգնի նաև տեղեկատվություն ստանալ զինամթերքների չգործման մակարդակի մասին, որն իր հերթին հնարավորություն կտա իրականացնել նախագծման կանխատեսումներ ՉՊԶ և ԼՊԶ տեսակների և քանակների մասին, որոնք կարող են հանդիպել այլ մարտի դաշտերում:

Ժամանակակից քարտեզագրման և հաշվետվական գործիքների (GIS, IMSMA և այլն) առկայությունը պետք է հնարավորություն տա իրականացնել ճշգրիտ տեղեկատվության կառավարումը՝ անհետաձգելի և երկարաժամկետ ՊՀՀ պահանջների նախագծմանը օժանդակելու համար: Ելնելով այն հանգամանքից, որ որոշ երկրներում ՊՊՄ և ՊԶ վնասագերծման անհրաժեշտությունը դեռ առկա կլինի տասնյակ տարիների ընթացքում՝ ի սկզբանե պետք է սահմանվի հստակ և համապարփակ գրանցումների համակարգ, որը ջանասիրաբար կպահպանվի:

ԱԳԱՄ-ը պետք է սահմանի հաշվետվողականության և գրանցումների պահանջները:

8. Պատասխանատվություններ և պարտավորություններ

8.1 Հակամարտության կողմերի պարտավորություններ

Միացյալ ազգերի կազմակերպության կանոնադրության, ՈՍԶ արձանագրություն V-ի և զինված հակամարտությունների վերաբերյալ միջազգային օրենսդրության կանոնների մեջ բերված սկզբունքներին համապատասխան՝ զինված հակամարտության կողմերը պատասխանատվություն են կրում քաղաքացիական բնակչության պաշտպանությունը ՊՊՄ-ներից ապահովելու համար:

Այն դեպքերում, երբ օգտագործվում են ՊԶ-ներ, որոնք վերածվում են ՊՊՄ-ների, “օգտագործողները” պետք է հնարավորության դեպքում ակտիվ ռազմական գործողությունների դադարից հետո տրամադրեն տեխնիկական, ֆինանսական, նյութական և մարդկային ռեսուրսների աջակցություն՝ նման ՊՊՄ-ների նշագծմանը և վնասազերծմանը, հեռացմանը և վերացմանն օժանդակելու նպատակով:

Հակամարտության կողմերը պատասխանատու են հետևյալ գործողությունների համար՝

- ա) ՊՊՄ կողմից ներկայացվող վտանգի հետազոտություն և գնահատում.
- բ) գծանշման և վնասազերծման, հեռացման և վերացման տեսանկյունից կարիքների և իրականացվելիության գնահատում և գերակայությունների սահմանում.
- գ) ՊՊՄ-ների գծանշում և վնասազերծում, հեռացում և վերացում.
- դ) սույն գործողությունների իրականացման համար ռեսուրսների ներգրավման ուղղությամբ քայլերի ձեռնարկում.
- ե) այն աշխարհագրական տարածքներում, որոնք ներկայումս գտնվում են հակամարտության մեկ կամ ավելի կողմերի վերահսկողությունից դուրս, անհրաժեշտ է ապահովել գրանցումների կամ ըստ տեսակների և նրանց գտնվելու վայրի, զինամթերքների օգտագործման տեղեկատվության, ինչպես նաև ՊՊՄ-ների գտնվելու վայրի վերաբերյալ իրենց մոտ առկա այլ տեղեկատվության մատչելիությունը:

[Հղում՝ Որոշակի սովորական զենքերի (ՈՍԶ) օգտագործման արգելքների և սահմանափակումների վերաբերյալ կոնվենցիա, որոնք համարվում են առավել վնասակար կամ ընդհանուր ազդեցություններ ունեցող]:

8.2 Միացյալ ազգերի կազմակերպության պարտավորություններ

Ազդեցության ենթարկված համայնքների և պետությունների անունից Միացյալ ազգերի կազմակերպությունը պետք է պատրաստ լինի գնահատել իրավիճակները և աջակցել հակամարտության կողմերից համապատասխան տեղեկատվության հավաքագրմանը:

Միացյալ ազգերի կազմակերպությունը պետք է տեղեկատվություն պահպանի հետևյալի մասին՝

- ա) վնասազերծման միջոցներ և ՊՊՄ հետ աշխատանքի համար տեխնոլոգիաներ.
- բ) փորձագետների, փորձագիտական գործակալությունների կամ ՊՊՄ վնասազերծման հետ կապված շփման կետերի ցանկեր.
- գ) տեխնիկական տեղեկատվություն պայթուցիկ զինամթերքի համապատասխան տեսակների վերաբերյալ:

8.3 ԱԳԱՄ-ի պարտավորություններ

ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպությունը պետք է՝

- ա) հնարավորության դեպքում պայմանագրերում և համաձայնագրերում հստակեցնի մաքրման ենթակա տարածքը և մաքրման խորությունը.
- բ) հստակեցնի մաքրման չափանիշները՝ վնասազերծող կազմակերպություններին ճկունություն տրամադրելով կասկածելի տարածքի սահմաններում մաքրում իրականացնելու համար.
- գ) հստակեցնի ՈԱ և ՈՎ չափորոշիչները և ուղենիշները, որոնք պետք է կիրառվեն մաքրման պայմանագրերի և համաձայնագրերի համար.
- դ) Հավատարմագրի վնասազերծումն իրականացնող կազմակերպությունը.
- ե) պահպանի մաքրված և չմաքրված հողատարածքների գրանցամատյան, որը ցույց կտա կասկածելի յուրաքանչյուր տարածքի մաքրման կարգավիճակը.
- զ) հավաքագրի տեխնիկական տեղեկություններ և ապահովի պատահարների /միջադեպերի տեղեկությունների/ վերլուծության մատչելիությունը՝ նախկին մարտի դաշտերում ՊԶ տեղակայման որոշման և նրանց ապահով հեռացմանն օժանդակելու նպատակով.
- է) հստակեցնի վնասազերծման կազմակերպության համար կիրառվելիք հիմնական ՊՀՀ փորձառությունները:

8.4 Վնասազերծող կազմակերպության պարտավորություններ

Վնասազերծումն իրականացնող կազմակերպությունը պետք է՝

- ա) Հավատարմագրվի ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպության կողմից որպես ՄԳՏՄ կազմակերպություն գործունեություն ծավալելու նպատակով
- բ) Կիրառի ԱԳԱՄ մաքրման չափորոշիչները: Ազգային չափորոշիչների բացակայության դեպքում վնասազերծող կազմակերպությունը պետք է կիրառի ՀԱԳՄՉ, կամ պայմանագրում կամ Հավատարմագրում բերված այլ չափորոշիչներ
- գ) Ըստ ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպության կողմից նշված կարգի պահպանի մաքրման փաստաթղթերը և ապահովի դրանց մատչելիությունը
- դ) Կիրառի կառավարման պրակտիկաներ և գործունեության ընթացակարգեր, որոնք նպատակ են հետապնդում մաքրել հողատարածքն ըստ պայմանագրում և առաջադրանքի համաձայնագրերում բերված պահանջների
- ե) Ապահովի ականներ ունեցող համայնքների լիարժեք իրազեկումը տարածքում ականազերծման գործողությունների վերաբերյալ և համայնքի ներգրավվածությունը (մասնավորապես կապված մաքրման խորության հետ)
- զ) Ապահովի ՄԳՏՄ գործողություններում ներառված անձանց կոմպետենտությունը և համապատասխան վերապատրաստումը:

ԱԳԱՄ կամ մարմինների բացակայության դեպքում վնասագերծող կազմակերպությունը պետք է ստանձնի լրացուցիչ պարտականություններ: Վերջիններս ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալ պարտականություններով՝

- ա) յուրաքանչյուր մարտադաշտի համար համաձայնեցնել և պաշտոնապես փաստաթղթավորել պահանջը:
 - (1) վնասագերծման ենթակա տարածքը և
 - (2) մաքրման խորությունը
- բ) սահմանել և կիրառել վնասագերծման գործողությունների վերահսկման համակարգը, բացահայտված ՉՊԶ և ԼՊԶ վերաբերյալ մանրամասն հաշվետվությունների ներկայացումը և մաքրված հողատարածքի հետմաքրման ստուգումները, և
- գ) ԱԳԱՄ ստեղծման ընթացքում աջակցություն ցուցաբերել ընդունող երկրին մաքրման որակի ազգային չափորոշիչների նախագծման ուղղությամբ:

8.5 Վերահսկող մարմնի պարտավորություններ

Վերահսկող մարմինը պետք է.

- ա) հավատարմագրվի ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպության կողմից որպես վերահսկող մարմին՝ գործունեություն ծավալելու նպատակով.
- բ) վերահսկի վնասագերծող կազմակերպությունը և նրա ստորաբաժանումները ըստ ՀԱԳՄՉ 07.40-ի և ԱԳԱՄ-ի կամ նրա անունից գործող կազմակերպության պահանջների.
- գ) ըստ ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպության կողմից նշված կարգի՝ պահպանի վերահսկման ստուգումների փաստաթղթերը և ապահովի դրանց մատչելիությունը:

8.6 Ստուգող մարմնի պարտավորություններ

Ստուգող մարմինը պետք է՝

- ա) հավատարմագրվի ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպության կողմից՝ որպես ստուգող մարմին գործունեություն ծավալելու նպատակով.
- բ) կիրառի նմուշների ստացման ընթացակարգերն ըստ ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպության պահանջների կամ ՀԱԳՄՉ 09.20-ի.
- գ) ըստ ԱԳԱՄ կամ նրա անունից գործող կազմակերպության կողմից նշված կարգի պահպանի ստուգումների փաստաթղթերը և ապահովի դրանց մատչելիությունը:

Հավելված Ա (Նորմատիվ) Հղումներ

Հետևյալ նորմատիվ փաստաթղթերը պարունակում են դրույթներ, որոնք այս տեքստի հղումների միջոցով կազմում են չափորոշիչի այս մասի դրույթները: Ամսաթվեր պարունակող հղումների դեպքում՝ այդ հրատարակումներում հետագայում կատարված փոփոխությունները կամ վերանայումները չեն կիրառվում: Մակայն չափորոշիչի այս մասի վրա հիմնված համաձայնագրերի կողմերին խրախուսվում է հնարավորություն գտնել՝ ստորև նշված նորմատիվ փաստաթղթերի առավել թարմ տարբերակները կիրառելու համար: Ամսաթիվ չպարունակող հղումների դեպքում կիրառվում է այդ նորմատիվ փաստաթղթի ամենավերջին տարբերակը: ISO-ի և IEC-ի անդամներն ունեն վավեր ISO կամ EN գրանցամատյան:

- a) ՀԱԳՄՉ 07.10 Ականազերծման գործողությունների կառավարման ուղեցույց;
- b) ՀԱԳՄՉ 07.30 Ականազերծող կազմակերպությունների և գործողությունների հավատարմագրում;
- c) ՀԱԳՄՉ 07.40 Ականազերծման կազմակերպությունների մոնիտորինգ;
- d) ՀԱԳՄՉ 08.20 Տեխնիկական հետազոտություն;
- e) ՀԱԳՄՉ 08.40 Վտանգների գծանշում;
- f) ՀԱԳՄՉ 09.10 Վնասազերծման պահանջներ;
- g) ՀԱԳՄՉ 09.20 Մաքրված հողատարածքի ստուգում՝ նմուշների ստացման ընթացակարգերի կիրառման ուղեցույցներ;
- h) ՀԱԳՄՉ 09.30 Պայթուցիկ զինամթերքի հեռացում:

Այլ տեղեկատվական հղումներ՝

- ա) Պատերազմի պայթուցիկ մնացորդների մասին ՈՍԶ արձանագրություն V;
- բ) ՄԱԿ կանոնադրություն;
- գ) TN 09.30.01 2001 – Զինված մարտական մեքենաների (ԶՄՄ) ՊՀՀ վնասազերծում;
- դ) TN 09.30.02 2001 – Աղբատացված ուրանի (ԱՌւ) վնասազերծում;
- ե) TN 09.30.06 2007 – Կուտակված զինամթերքների վնասազերծում՝ ելնելով Լիբանանի փորձից;
- զ) Եվրոպական խորհրդի կողմից 2003թ-ին տպագրված Մարդասիրական ականազերծման համար մետաղորսիչ սարքերի ձեռնարկ;
- է) 2006թ-ի մարտին ՄԱԺՄԿ կողմից հրատարակված Հայտնաբերման տեխնոլոգիաների և մարդասիրական ականազերծման համակարգերի վերաբերյալ ուղեցույց:

Պետք է օգտագործվի թվարկված փաստաթղթերի վերջին տարբերակը/հրատարակությունը: Այս չափորոշիչում կիրառված բոլոր փաստաթղթերի պատճենները պահպանվում են ՄԱԺՄԿ-ում (Մարդասիրական ականազերծման Ժնհի միջազգային կենտրոն): ՀԱԳՄՉ չափորոշիչների, ուղղորդիչ սկզբունքների և փաստաթղթերի վերջին տարբերակների/թողարկումների գրանցամատյանը պահպանվում է ՄԱԺՄԿ կողմից և տեղակայված է ՀԱԳՄՉ կայքէջում (տես www.mineactionstandards.org): ԱԳԱՄ-ը, գործատուները և շահագրգիռ այլ մարմինները ու կազմակերպություններ պետք է նախքան ականազերծման ծրագրեր սկսելը ձեռք բերեն դրանց պատճենները:

Հավելված Բ (Տեղեկատվական) Տերմիններ, սահմանումներ և հասկացումներ

B.1.

Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊՁ)

Պայթուցիկ զինամթերք, որոնք չեն օգտագործվել զինված հակամարտության ընթացքում, որոնք լքվել կամ գցվել են զինված հակամարտության մասնակցի կողմից և որոնք այլևս չեն գտնվում դրանք լքած կամ գցած կողմի վերահսկողության տակ: Լքված պայթուցիկ զինամթերքը կարող են կամ չեն կարող լինել լիցքավորված, համակցված, հրահանները քաշված կամ այլապես նախապատրաստված օգտագործման համար: (ՈՍԶ արձանագրություն V)

B.2.

Մարտական գործողությունների տարածքի վնասագերծում (ՄԳՏՄ)

Վտանգավոր այնպիսի տարածքի պարբերական և վերահսկվող մաքրում, որում առկա չեն ականներ:

B.3.

Ծուղակ ականներ

Պայթուցիկ կամ ոչ պայթուցիկ սարքեր կամ այլ նյութեր, որոնք կանխամտածված կերպով տեղադրվել են վնասներ հասցնելու նպատակով այն ժամանակ, երբ տեղաշարժվում է ակնհայտորեն անվտանգ իրը կամ իրականացվում է անվտանգ որևիցե գործողություն: [AAP-6]

B.4.

ՍՈԶ (Սովորական որոշակի զինամթերքի վերաբերյալ կոնվենցիա)

Նշում՝ Վնասակար կամ ընդհանուր ազդեցություններ ունեցող որոշակի սովորական զենքերի օգտագործման արգելքների և սահմանափակումների վերաբերյալ 1980թ. կոնվենցիա, որը փոփոխության է ենթարկվել 2001թ. դեկտեմբերի 21-ին: Այն ունի հինգ «արձանագրություններ»: Դրանցից միայն երկուսն են վերաբերում ականագերծման գործողություններին: **Փոփոխված Արձանագրություն II** վերաբերում է հողային ականներին, ծուղակ ականներին և այլ սարքերին, իսկ **Արձանագրություն V** վերաբերում է պատերազմի պայթուցիկ մնացորդների (ՊՊՄ) խնդրին:

B.5.

Մաքրված տարածք

մաքրված հողատարածք

վնասագերծող կազմակերպության կողմից ֆիզիկապես և հետևողականորեն մշակված տարածք՝ որոշակի խորության վրայից բոլոր ականների և ՊՊՄ հեռացումը և (կամ) վերացումն ապահովելու նպատակով:

Նշում՝ Մաքրված տարածքը կարող է ներառել տեխնիկական հետազոտության գործընթացի ընթացքում մաքրված հողատարածքը: Այն կարող է ներառել սահմանային ճանապարհները կամ մաքրված ճանապարհները:

B.6.

Ականագերծող կազմակերպություն

վերաբերում է ցանկացած կազմակերպությանը (պետական, ՀԿ կամ առևտրային հաստատությանը), որը պատասխանատու է ականագերծման ծրագրեր կամ առաջադրանքներ կատարելու համար: Ականագերծող կազմակերպությունները կարող են լինել հիմնական կապալառուներ, ենթակապալառուներ, խորհրդատուներ կամ գործակալներ:

B.7.

Պայթուցիկ նյութեր

Վնասագերծող կազմակերպությունների կողմից օգտագործվող բաղադրիչներ կամ օժանդակող նյութեր, որոնք պարունակում են որոշակի **պայթուցիկ նյութեր** կամ կարող են պայթյուն առաջացնել, ինչպիսիք են **պայթուցիչները** և **մարտական լիցքերը**:

B.8.

Պայթուցիկ զինամթերք (ՊԶ)

Պայթուցիկ նյութեր, միջուկային բաժանիչներ, սինթեզող նյութեր և կենսաբանական և քիմիական տարրեր պարունակող բոլոր զինամթերքները: Սրանք ներառում են ռումբերը և զինամասերը, ուղղորդվող և բալիստիկական հրթիռները, հրետանին, ականանետները, հրթիռները և փոքր զինամթերքների **փամփուշտները**, բոլոր **ականները**, տորպեդոները և խորքային ռումբերը, հրատեխնիկական, կուտակումները և բաշխիչները, փամփուշտների և պայթուցիկ նյութերի միջոցով գործարկվող սարքերը, էլեկտրոնային պայթուցիկ սարքերը, թաքնված և իմպրովիզացված պայթուցիկ նյութերը և գոյություն ունեցող բոլոր նման կամ հարակից իրերը կամ բաղադրիչները: [AAP-6]

B.9.

Պայթուցիկ զինամթերքի հեռացում (ՊԶՀ)

ՊԶ **հայտնաբերումը**, նունացումը, գնահատումը, **վնասագերծումը**, վերականգնումը և **հեռացումը**: ՊՀՀ պետք է իրականացվի:

ՊՊՄ հայտնաբերման դեպքում որպես **ականագերծման** գործողությունների անբաժանելի մաս:

Վտանգավոր տարածքներից դուրս հայտնաբերված **ՊՊՄ** վերացման համար, (սա կարող է լինել **ՊՊՄ մեկ իր**, կամ որոշակի տարածքի վրա մեծ քանակությամբ մնացորդներ),

ՊԶ վերացման համար, որը **վտանգավոր** է դարձել մաշվածության, վնասվելու կամ **վերացման** փորձ կատարելու հետևանքով:

B.10.

Պատերազմի պայթուցիկ մնացորդներ (ՊՊՄ)

Չպայթեցված զինամթերք (ՉԶ) և Լքված պայթուցիկ զինամթերք (ԼՊԶ): (ՍՈԶ արձանագրություն V):

B.11.

Պայթուցիկ նյութեր

Նյութ կամ նյութերի խառնուրդ, որն արտաքին ազդեցությունների տակ կարող է արագորեն էներգիա բաց թողնել գազերի և ջերմության տեսքով: [AAP-6]

B.12.

վտանգ

վնասի պոտենցիալ աղբյուր: [ISO ուղենիշ 51:1999(E)]

B.13.

Ստուգող մարմին

Կազմակերպություն, որն ԱԳԱՄ անունից իրականացնում է հետմաքրման ՈՎ՝ կիրառելով պատահական ընտրանքի ստացման ընթացակարգերը կամ ստուգման այլ պատշաճ և համաձայնեցված մեթոդները:

B.14.

Նպատակային օգտագործում (հողատարածքի)

Ականագերծման գործողություններից հետո հողատարածքի օգտագործում:

Նշում. Նպատակային օգտագործում՝ արտադրանքի, գործընթացի կամ ծառայության օգտագործում՝ մատակարարի կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն: [ISO Ուղենիշ 51:1999(E)]

Նշում. Հողի նպատակային օգտագործումը հարկավոր է ներառել մաքրման առաջադրանքի նկարագրության և մաքրման առաջադրանքի հանձնման փաստաթղթերում:

B.15.

Վերահսկող մարմին

կազմակերպություն, որը հիմնականում հանդիսանում է **ԱԳԱՄ** բաղադրիչ և պատասխանատու է վերահսկման ազգային համակարգի կառավարման և իրականացման համար:

B.16.

Զինամթերք

Պայթուցիկ նյութերով, վառելիքով, հրատեխնիկայով, մեկնարկող նյութերով կամ միջուկային, կենսաբանական կամ քիմիական նյութերով լցված ամբողջական սարք՝ ռազմական գործողություններում օգտագործելու նպատակով, ներառյալ **ականառումբերը:** [AAP-6]

Նշում՝ Սովորական օգտագործման ժամանակ 'զինամթերքներ' (հոգնակի) կարող են լինել զենքերը, փամփուշտները և սարքավորումները:

B.17.

Ականազերծման գործողությունների ազգային մարմին (ԱԳԱՄ)

ականներ ունեցող յուրաքանչյուր երկրի պետական վարչություններ, կազմակերպություններ կամ հաստատություններ, որոնց հանձնարարված է կանոնակարգել, կառավարել և համակարգել ականազերծման գործողությունները:

Նշում՝ Հիմնականում ազգային ԱԳԱԿ կամ նրան հավասարազոր մարմին գործում է որպես ԱԳԱՄ կամ նրա անունից:

Նշում՝ Որոշ իրավիճակներում և որոշակի պահերին ՄԱԿ կամ այլ ճանաչված միջազգային մարմնի համար կարող է անհրաժեշտ և պատշաճ լինել ստանձնել ԱԳԱՄ պարտականությունների մի մասը կամ բոլորը և իրականացնել գործառույթների մի մասը կամ բոլորը:

B.18.

Արձանագրություն V

ՈՍԶ արձանագրություն V Պատերազմի Պայթուցիկ մնացորդների վերաբերյալ

Նշում՝ Արձանագրություն V-ի շրջանակներում Պետական կուսակցություններից կամ զինված հակամարտության կողմերից պահանջվում է վնասազերծել, հեռացնել կամ վերացնել ՊՊՄ (Հոդվ. 3) և գրանցել, պահպանել և փոխանցել պայթուցիկ զինամթերքի օգտագործման կամ լքման մասին տեղեկատվությունը (Հոդվ. 4): Նրանք պարտավոր են նաև ձեռնարկել բոլոր հնարավոր նախազգուշացումները՝ քաղաքացիական բնակչությանը (Հոդվ. 5) և մարդասիրական առաքելություններին ու կազմակերպություններին (Հոդվ. 6) պաշտպանելու նպատակով: Սույն գործունեությունն իրականացնելու դիրքում գտնվող պետական մարմինները պետք է այլ աշխատանքների հետ համատեղ համագործակցեն և աջակցություն ցուցաբերեն զմանշման, մաքրման, հեռացման, վերացման և զոհերին աջակցություն ցուցաբերելու գործում (Հոդվ. 7 և 8): Արձանագրություն V-ը ուժի մեջ է մտել 2006թ-ի նոյեմբերի 12-ին:

B.19.

Որակի ապահովում (ՈԱ)

ՈՎ մի մաս, որը կենտրոնանում է որակի պահանջների իրագործման մեջ վստահություն առաջացնելու վրա: [ISO 9000:2000]

Նշում՝ Մարդասիրական ակնազերծման ոլորտում ՈԱ նպատակն է հաստատել, որ ակնազերծման կառավարչական գործելաոճերը և գործառնական ընթացակարգերը համապատասխան են, կիրառվում են և ապահով, արդյունավետ ու գործուն կերպով կրավարարեն սահմանված պահանջներին: Ներքին ՈԱ կիրականացվի հենց ակնազերծող կազմակերպությունների կողմից, սակայն արտաքին վերահսկող մարմնի կողմից պետք է իրականացվեն նաև արտաքին ստուգումներ:

B.20.

Որակի վերահսկում (ՈՎ)

Որակի ապահովման մի մաս, որը կենտրոնացած է որակի պահանջների ապահովման վրա [ISO 9000:2000]:

Նշում. ՈՎ վերաբերում է վերջնական արդյունքի ստուգմանը: Մարդասիրական ակնազերծման գործողությունների դեպքում ‘արդյունք’ է հանդիսանում ապահով կերպով վնասազերծված հողատարածքը:

B.21.

Վստահելի (ակնազերծման գործողությունների վերաբերյալ) տեղեկություններ

ակնազերծման գործողություն իրականացնելու համար ԱԳԱՄ կողմից ընդունելի և վստահելի համարվող տեղեկություններ:

B.22.

Ռիսկ

վնասի միջադեպ տեղի ունենալու հավանականության և այդ վնասի մակարդակի համադրություն: [ISO Ուղենիշ 51:1999(E)]

B.23.

Ապահով

ռիսկի բացակայություն: Մովորաբար առավել պատշաճ և ընդունելի է ‘տանելի ռիսկ’ տերմինը:

B.24.

Տանելի ռիսկ

Ռիսկ, որն ընդունելի է տվյալ իրավիճակում՝ ելնելով հասարակության ներկայիս արժեքներից: [ISO Ուղենիշ 51:1999(E)]

B.25.

Չպայթած զինամթերք (ՉՊԶ)

ՊԶ, որը լիցքավորվել, համակցվել, հրահանները քաշվել կամ այլապես նախապատրաստվել է օգտագործմանը կամ օգտագործվել է: Այն կարող է կրակած լինել, գցված, մեկնարկված կամ հրահանը քաշված, սակայն դեռևս մնալ չպայթած անսարքության, տեսակի կամ էլ մեկ այլ պատճառով:

Փոփոխությունների գրանցում

ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կառավարում

ՀԱԳՄՉ-ի չափորոշիչների շարքը ենթակա է պաշտոնական վերանայման երեք տարին մեկ, սակայն սա չի բացառում այդ երեք տարիների ընթացքում փոփոխությունների կատարումը՝ ելնելով գործառնական անվտանգության և արդյունավետության կամ խմբագրական հանգամանքներից:

Այս ՀԱԳՄՉ-ի փոփոխությունների կատարման դեպքում դրանք համարակալվում են և այդ փոփոխությունների կատարման ամսաթիվն ու ընդհանուր մանրամասները նշվում են ստորև բերված աղյուսակում: Փոփոխությունները նաև պետք է նշվեն ՀԱԳՄՉ-ի առաջին էջում՝ թողարկման ամսաթվի տակ ներառելով «Ներառված են փոփոխություն թիվ 1 և այլն» արտահայտությունը:

Յուրաքանչյուր ՀԱԳՄՉ-ի պաշտոնական վերանայումից հետո կարող են թողարկվել նոր խմբագրությունները: Մինչև նոր հրատարակությունը կատարված փոփոխությունները կընդգրկվեն նոր հրատարակության մեջ և փոփոխությունների աղյուսակը կմաքրվի: Դրանից հետո կրկին կսկսվի փոփոխությունների գրանցումը, մինչև նոր վերանայում իրականացվի:

ՀԱԳՄՉ-ի ամենավերջին փոփոխությունները այն տարբերակներն են, որոնք տեղադրվում են ՀԱԳՄՉ-ի կայքէջում՝ www.mineactionstandards.org:

Թիվ	Ամսաթիվ	Փոփոխության մանրամասներ